

# ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԾՐՈՒՆ ԱՎԱԳՅԱՆ

## ՍՏԵՓԱՆ ԱԼԱԶԱԶՅԱՆԻ «ՉՍՊԻԱՑԱԾ ՎԵՐՔ» ՎԵՊԸ ՈՐՊԵՍ ՊԱՏՄԱԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՎԱՎԵՐԱԹՈՒՂԹ

*Բանալի բառեր – Ստեփան Ալազաջյան, «Չսպիացած վերք», Կ. Պոլիս, վեպ, թուրքական բռնապետություն, եվրոպական տերություններ, դիվանագիտություն, հայկական վիլայեթներ, բարենորոգումներ, բռնագաղթ, Ֆնդիճաք, Մեռնյաններ*

Բոստոնի «Նոր օր» թերթում 1995 թ. ապրիլի 22-ին տպագրած իր խոսքում Ստեփան Ալազաջյանը (1924-2010) վկայում է, որ «Չսպիացած վերք» վեպը գրելու մտահղացման ազդակները եղել են Հալեպի Սուրբ Քառասուն Մանկանց եկեղեցու արխիվում իր մեծ հոր ու նրա եղբայրների՝ սպանդից փրկվելու օգնության խնդրանքով Հալեպի հոգևոր առաջնորդին ուղղված գիրը հայտնաբերելը, ապա՝ հայ գրողների ու մտավորականների հետ իր՝ Ստամբուլ այցելության ժամանակ Բալկանյան ու Համաշխարհային առաջին պատերազմների տարիների մի քանի թուրքական արաբատառ թերթերի նյութերին ծանոթանալը. «Իմ նոր վեպի՝ «Չսպիացած վերք»-ի մտայնացումն այդ օրն էր, առիթը՝ այդ փոքրիկ, մատիտով գրուած նամակն ու Վոսփորի ավիի այս տեսարանը»<sup>1</sup>:

Դեռևս 1971 թ. Բեյրութի «Զարթոնք» թերթի աշխատակից Նազարեթ Թոփալյանին տված հարցազրույցում ապագա ծրագրերի վերաբերյալ հարցին Ալազաջյանը պատասխանել է, որ ավարտելու վրա է «Չսպիացած վերք» վեպը՝ նվիրված Կիլիկիայի բնակավայրերից մեկի՝ Ֆնդիճաքի հերոսամարտին. «Այն հարցերը, թե՛ ինչո՞ւ ֆնդուրճաքցիները չտեղահանուեցան, այլ կռուեցան մինչև վերջին շունչը, սոսկ ինքնապաշտպանութեան բնոյթ չէին կրեր, այլ կը դրսևորէին հայ ազատասիրութեան ոգին... Չէ՞ որ անոնք գիտէին, թե՛ իրենց փոքրաթիւ քանակով, կանոնաւոր զօրքի բացակայութեան, կարող չէին յաղթելու թշնամիին, որ հազարապատիկ ուժ ուներ և կանոնաւոր բանակ:

*Ապա ինչո՞ւ կռուեցան, հարցեր՝ որոնք և՛ պատմութեան, և՛ գեղարուեստական արձակի համար պէտք է դաստիարակչական և ճանաչողական մեծ արժէք ունենան»<sup>2</sup>:*

<sup>1</sup> Ալազաջյան Ստ., Հայ մամուլի էջերում, Քալիֆորնիա, 2008, էջ 269:

<sup>2</sup> «Զարթոնք», 9 դեկտեմբերի 1971:

Վերհանվող թեման նոր չէր գրողի ստեղծագործական աշխարհում: Կարելի է ասել, որ Ալաջաջյանի գործերի մի զգալի մասը խարսխված է մեր ազգային ու քաղաքական հենց այդ խնդիրներին: Նրա առաջին հաջողված գործերը («Անապատում», «Պարտություն» և այլն) արդեն ընդգրկում էին այդ ասպարեզի բարդ խնդիրների արծարծումներ: Հայ ժողովրդի գոյապայքարի թեման հետազայում ևս մշտապես մնաց գրողի ուշադրության կիզակետում և մինչև անգամ այն գործերում, որոնք առաջին հայացքից թվում է, թե այլ «ասելիք» ունեն:

Երբ Ալաջաջյանը ձեռնարկեց 1912-1915 թթ. դեպքերին վերաբերող «Չսպիացած վերք» վեպի շարադրումը, հրապարակի վրա էր և արդեն լայն ճանաչում էր գտել նրա «Եղեգները չխոնարհվեցին» վեպը, որը ժամանակագրական ընդգրկումով, փաստական վկայակոչումով և գեղարվեստորեն ներկայացնում էր Առաջին համաշխարհային պատերազմին հաջորդած տարիների դեպքերի ու նաև 1921 թ. թուրք-ֆրանսիական համաձայնությունների խարդավանքների և դրանց հետևանք՝ Չեյթունի վերջին հերոսամարտի պատկերները:

Վեպում Ալաջաջյանն օգտագործել է պատմական տարալեզու փաստաթղթեր՝ գերմաներեն, անգլերեն, ֆրանսերեն, ռուսերեն, հայերեն մամուլի հարուստ հավաքածուներից:

Եռահատոր այս վեպի առաջին հրատարակության (1989 թ.) առթիվ ընթերցողին ուղղված «Այս վեպը...» վերնագրով իր խոսքում հեղինակը գրում է. «Համաշխարհային առաջին պատերազմում Մերձավոր Արևելքի իրադարձությունների պատմությանը նայել եմ փաստերի աչքերով և պատմության աչքերով՝ իմ ժողովրդի ճակատագրին: Չեմ մեղանչել: Գիտակցել եմ, որ իմ ժողովրդի հանդեպ կատարվել է մի մեծ անարդարություն, և այդ անարդարությունն էլ պարտավորեցրել է ինձ գրել այս վեպը:

... Ամեն մի կերպար, իրավ, մի անձնավորություն է, ամեն դրվագ ու դեպք՝ ճշմարիտ մի պատահար, ուրեմն, ճշմարիտ մի պատմություն է այս վեպը:

... անհրավված ժողովրդի զավակն եմ ես, և այդ զավակի պարտքի հատուցումն է այս վեպը:

...արտասուքից բխող փոքրիկ սփոփանք է այս վեպը...»<sup>1</sup>:

«Ճշմարիտ մի պատմություն...», «պարտքի հատուցում...», «արտասուքից բխող փոքրիկ սփոփանք»: Արդյո՞ք ասված չէ ամեն բան, որ բնութագրում է վեպը: Եվ իրոք, շուրջ 1500 էջից բաղկացած այս վեպը ընթերցողի համար լուսաբանում է մեր ժողովրդի անցած ուղու ամենաճակատագրական ժամանակահատվածներից մեկում՝ այս անգամ՝ Առաջին համաշխարհային պատերազմին նախորդած տարիներին ծրագրված և պատերազմի ըն-

---

<sup>1</sup> Ալաջաջյան Մտ., Չսպիացած վերք, հ. I, գիրք 1-ին, Երևան, 1989, էջ 5-6:

թացքում իրականացված այն բռնությունների ու նախաձիռի հավաստի պատմությունը, որը բաժին հասավ արևմտահայությանը, և որն էլ «*պարտքի հատուցման*» գերագույն գիտակցությամբ ու արտասովորական զգացումների տպավորիչ պատումով մեզ է ներկայացնում Ալաջաջյան գրողն ու պատմիչը, ազգագրագետն ու աշխարհագրագետը, քաղաքագետն ու գեղագետը:

Քիչ գրքեր կան, որ պատկերում են «*անպատելին*»՝ հայոց գաղթն ու աքսորը: Ալաջաջյանը ստանձնել է այդ դժվարին գործը՝ լավ գիտակցելով, որ *եղեռնը անպատում է, որ եղեռնը հնարավոր չէ պատմել*: Այդուհանդերձ, գրողը՝ որպես ժողովրդի այդ անպատելի սպանդի հետևանքներն իր վրա զգացած ազնիվ հոգի, այդ մասին գրում է որպես աքսորն ու մահը վերապրող իսկական արվեստագետ:

Ուղղակի զարմանք է հարուցում շրջանի իրադարձությունների, մանավանդ՝ մեծ տերությունների կատարած քաղաքական խարդավանքների և դիվանագիտական նենգությունների, թուրքական բռնակալության բուն էության, երկրում գործված նախաձիռների, ինչպես նաև արևմտահայոց կյանքի այն իմացությունը, որ հեղինակը դրսևորում է վեպի ամբողջ շարադրանքի ընթացքում: Այս առումով կարևոր նշանակություն են ունեցել ոչ միայն այլևայլ երկրների պատմություններից, մամուլից քաղված տվյալներն ու դիվանագիտական աղբյուրներից ձեռք բերված վկայությունները, այլև անձնական կյանքի այն ճանապարհը, որը վիճակվեց անցնել ծագումով արևմտահայ, ճակատագրի բերումով սփյուռքահայ և սրտի կանչով հայրենադարձ Ստեփան Եղիայի Ալաջաջյանին:

Ալաջաջյանը XX դարի 50-60-ական թթ. խորհրդահայ գրական այն սերնդի ներկայացուցիչներից մեկն էր, որն իր գրականությամբ ու մշակութային գործունեությամբ անուրանալի ավանդ ունեցավ մեր ազգային գիտակցության նոր վերելքի գործում, իր ստեղծագործություններով ու արծարծած թեմաներով ուղղակիորեն ազդեց երբեմն հակասական, երբեմն պարուրած ընթացող մշակութային ու գաղափարախոսական ոլորտների վրա, ասպարեզներ, որտեղ իր իսկ խոսքերով ասած՝ «... *մերթ փառքն էր առավել, մերթ՝ ցավը*»:

Գրական նախափորձերը կատարելով դեռևս 15 տարեկանում՝ Ալաջաջյանը փորձել է մուսանների աշխարհ մտնել չափածո խոսքով: Հալեպում տպագրել էր «Վշտի ծաղիկներ» գիրքը: Իսկ երբ 22 տարեկանում՝ 1946 թ., հայրենադարձվեց, բանաստեղծությունը «*նեղ*» եղավ նրա մտքի թռիչքներին, և շատ շուտով մեկը մյուսի հետևից լույս տեսան նրա արձակ գործերը՝ «Անպատում» (1953), «Պարտություն» (1957), «Այգիների աշխարհում» (1961), «Փյունիկ» (1962), «Առանց հայրենիքի» (1963), «Արծիվն ու հովիվը» (1964): Ստեղծագործական այս ճանապարհն ի վերջո հանգեցրեց «Եղեգները չխոնարհվեցին» երկհատոր վեպի հզոր երկունքին (1966, 1967), որին հաջորդեց 1975 թ. տպագրած «Մաղլենն ապրում է Փարիզում» գիրքը: Ստեղծագործական երկրորդ փուլը որոշ առումով պայմանավորված էր գրողի առողջական դժվարին խնդիրներով:

1978 թ. տպագրվեց նրա այդ վիճակի տրամադրություններն արտահայտող «Անառագաստ նավակներ» գիրքը, ապա լույս տեսան «Ապառաժները արտասվել գիտեն» (1980), «Ոսկեգույն ծիրկաթին» (1981), «Վիրավոր եղջերուն» (1984) գործերը:

1989, 1990, 1993 թթ. լույս տեսած «Չսպիացած վերք» եռահատոր վեպը Ալաջաջյանի տաղանդի նոր փայլատակումը եղավ, որտեղ արտահայտվեց գրական այն մեծ ձիրքը, որը ստեղծագործական բեղուն տարիների արդյունք էր:

Ալաջաջյանի կյանքի հաջորդ փուլը, ստիպողական դեպքերի բերումով, սփյուռքյան շրջանի արտահայտություն է: 1973 թ. Մոսկվայում կրելով ձայնավարների վիրահատություն, որը, ցավոք, դրական արդյունք չտվեց, 1992 թ. նա ստիպված մեկնեց Ամերիկայի Միացյալ Նահանգներ (Լոս Անջելես), որտեղ խմբագրեց «Առագաստ» գրական ամսագիրը: Բուժումներին զուգահեռ Ալաջաջյանը այստեղ ևս շարունակեց գրական գործունեությունը՝ իր «ձայնը» լսելի դարձնելով նաև ամերիկյան հողում, դրսևորելով անմնացորդ հայրենասիրություն ու հայասիրություն, և ստեղծվեցին «Լուսավորյալ խորաններ» (1993), «Ատրուշաններ» (1995), «Ճամփեզրի վրա» (1998), «Վաթսունականներ» (2002), «Հայ մամուլի էջերում» (2008) գրքերը:

Ալաջաջյանի գրած սցենարներով են «Հայֆիլմում» նկարահանվել «Կտոր մը երկինք» (1980) և «Ճերմակ անուրջներ» (1984) կինոնկարները:

Տաղանդավոր գրողը նաև թարգմանիչ էր, և նրա թարգմանությամբ են տպագրվել Վիլյամ Շեքսպիրի, Ժան Պոլ Սարտրի, Հերբերտ Ուելսի, Վիլյամ Սարոյանի և մի շարք այլ ականավոր հեղինակների գործեր:

Երբ լույս տեսավ Ալաջաջյանի «Չսպիացած վերք» եռագրության առաջին հատորը, հեղինակն արդեն ոչ միայն ճանաչված, այլև վաստակ ունեցող գրող էր, ում գործերի մի մասը լույս էր տեսել օտար լեզուներով՝ ռուսերեն, պարսկերեն, անգլերեն, ֆրանսերեն, չեխերեն...:

Ալաջաջյանի «Չսպիացած վերք» վեպն իր արժանի տեղն ունի XX դարի մեր գրականության այնպիսի անուրանալի գործերի կողքին, ինչպիսիք են Երվանդ Օտյանի՝ հայոց եղեռնապատումն արտացոլող «Տասներկու տարի Պոլսեն դուրս», «Արյունոտ հիշատակներ» հուշագրությունները, Խաչիկ Դաշտենցի «Ռանչպարների կանչը» վիպասքը, Կոստան Զարյանի «Տատրագոմի հարսը», Վազգեն Շուշանյանի «Երկիր հիշատակաց», Հովհաննես Շիրազի «Հայոց դանթեականը» պոեմները, Գուրգեն Մահարու «Այրվող այգեստաններ», Սերո Խանգաղյանի «Խոսեք Հայաստանի լեռներ» վեպերը, Պարույր Սևակի «Անլռելի զանգակատունը»...: Գործեր, որոնցում գեղարվեստական բարձր վարպետությամբ պատկերվում են մեր ժողովրդի նկատմամբ թուրք մարդասպանների իրականացրած բռնությունները, ջարդերը, հայրենի բնօրրանից արտաքսումները: Եվ, ինչպես մյուս հեղինակները, Ալաջաջյանը ևս իր խոսքի պաթոսն ուղղել է ոգեղեն ուժի, մեր ազգային նկարագիրը բարձր պահող բարոյական արժեքների բացահայտումներին, որոնք ապրեցրել են

ժողովրդին ու հայ մարդուն մեր պատմության դժվարին քառուղիներում:

Ալաջաջանի այս վեպը խորքային կամուրջներ ունի նաև Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան քառասուն օրը» երկի հետ, որի պատկերած աշխարհը և իրադարձությունները ժամանակային առումով մոտ են ազգային գոյամարտի նույն իրողություններին: Եթե այս ամենին հավելենք այն փաստը, որ այս տարի՝ 2020 թ. օգոստոսին, լրանում է Կիլիկիայում (Ադանայում) հայերի և քրիստոնյա մի քանի տեղաբնակ ժողովուրդների կողմից հրապարակված Անկախության հռչակագրի 100-ամյակը, ապա պատահական չէր, և դեռ ավելին՝ անհրաժեշտություն էր դարձել մեր օրերում այս հրաշալի վեպի վերահրատարակությունը, որը և հովանավորել է «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամը»:

«Զսպիացած վերք» վեպն իր հղացմամբ ու կառուցվածքով բազմաճյուղային և բազմահանգուցային գործ է, թեմատիկ առումով՝ պատմական-քաղաքական, պատկերային եղանակով՝ գեղարվեստական: Հյուսվածքի այս բազմազանությունը Ալաջաջանին հնարավորություն է ընձեռել անդրադառնալ իրականության մեջ տեղի ունեցած տարաբնույթ իրադարձությունների, հասարակական ու ազգային կյանքի բազում խնդիրների, մարդկային մտածումների, ապրումների, դատումների, հոգեբանության և գործունեության բնութագրական դրսևորումների: Վեպում պատկերված են պատմական մի շարք անձինք, որոնք էական դերակատարություն են ունեցել այդ շրջանի իրադարձություններում: Գրողը շրջանառության մեջ է դնում տասնյակ ու հարյուրավոր տեղանուններ, փողոցների ու թաղերի, տաճարների, վանքերի, սրբավայրերի, մզկիթների, ինչպես նաև աշխարհագրական այլևայլ անվանումներ, որոնք հազեցնում են ներկայացվող դեպքերը, պատումը դարձնում որոշակի ու հավաստի: Այդպես արևմտահայ աշխարհի մասին մեզանում գրել են երկու հեղինակներ՝ Հակոբ Մնձուրին և Խաչիկ Դաշտենցը, որոնց ստեղծագործությունները, գրականություն լինելուց զատ, Հայաստան երկրի անդաստանի ու լեռնաշխարհի իրական վավերագրությունն ու գեղարվեստական քարտեզագրումն են, խորին խորհուրդը բնաշխարհիկ հայ մարդու կյանքի:

Ալաջաջանի վեպի սյուժեն ծավալվում է Բեռլին-Բոսֆոր-Բաղդադ (կարճ՝ ԲԲԲ) երկաթուղու շինարարության հետ կապված իրողությունների պատկերմանը զուգահեռ, սակայն բուն նպատակը Թուրքիայի մայրաքաղաքում տեղի ունեցող քաղաքական իրադարձությունների, հայաբնակ գավառներում ծավալված դեպքերի վերհանումն է, Կիլիկիայի հայաբնակ մի փոքրիկ գյուղի՝ Ֆնդիճաքի հերոսամարտի ցուցանումը, այդ ամենի հետ կապված՝ եվրոպական տերությունների նենգ քաղաքականության ու թուրքական բռնակալության ճիրաններում տառապող արևմտահայության դաժան ճակատագրի բացահայտումները: Հեղինակային ասելիքը հստակ է. կառուցվող երկաթուղին, երկրներն ու ժողովուրդներին իրար կապելու միջոց լինելու փոխարեն, պետություններին և ազգերին իրար հակադրելու ու միմյանց դեմ

պատերազմելու ուղիներ է հարթում, ստեղծում շահադիտական մի մթնոլորտ, որից օգտվում են ինչպես պատերազմ հրահրող առանձին ուժեր, այնպես էլ բռնապետական իշխանությունները: Պատերազմ, որն իրար դեմ է հանել նաև նույն ազգերին պատկանող հազարավոր մարդկանց՝ հրեաներին, հայերին, հույներին, սիրիացիներին... ովքեր կռվում էին թշնամական բանակների հակադիր ռազմաճակատներում և իրար սպանում:

Աշխարհի նոր վերաբաժանման համար մեծ պետությունների սանձազերծած պատերազմը\*, ի վերջո, ողբերգական պիտի լիներ հատկապես հայ ժողովրդի համար: Դարանակալ Թուրքիան, որը մինչ այդ էլ հայահալած քաղաքականություն էր վարում, հնարավորություն ստացավ նոր թափով իրականացնել իր բռնատիրական նկրտումները՝ ոչ միայն սահմանափակել ու արգելքներ հարուցել թուրքական կայսրության մեջ ապրող արևմտահայության առջև, այլև իրականացնել «Թուրքիան թուրքերին» և առաջին հերթին՝ «Թուրքիան առանց հայերի» վաղուց փայփայած մարդատյաց ու ազգատյաց քաղաքականությունը, որը հասնում էր մինչև այն աստիճանի, որ պիտի ոչնչացվեին նաև... այլազգի մուսուլմանները\*\*:

Թուրքերի վարած այդ քաղաքականությանն ուղղակիորեն աջակցում էր Գերմանիան, քողարկված ձևերով նպաստում էին ինչպես ցարական Ռուսաստանի, այնպես էլ Անգլիայի ու Ֆրանսիայի պետական շրջանակները:

Թուրքիան «գերմանացվում»\*\*\* էր ոչ միայն զինամատակարարմամբ (այդ թվում՝ ռազմանավեր), սպայակազմերով և զինվորներով, այլև գերմանական դպրոցներ, որբանոցներ, ռազմական բուժհիմնարկներ ու բուժանձնակազմեր, որբախնամ կազմակերպություններ, մամուլի օրգաններ և այլ կառույցներ ստեղծելով: Տնտեսական, ռազմական, կրթական, հովանավորչական նման ներխուժումն այլ բան չէր, քան քաղաքական տիրակալություն, որի դրսևորումներից մեկը ԲԲԲ երկաթուղու կառուցումն էր, որը, ինչպես նշում է վեպի հեղինակը, հավասարազոր էր Թուրքիային շղթայելուն՝ հեռահար մի նպատակ, որը, ի տարբերություն Անգլիայի՝ տարածաշրջանին նավերով տիրելու ծրագրերի, երկաթգծով մխրճվելով պիտի կատարվեր:

Ալաջաջյանի վեպը հենց այդ իրողությունն է վերհանում և պատմական հիմնավորումներով ու գեղարվեստական միջոցների կիրարկմամբ ցույց տալիս, որ ԲԲԳ երկաթե ուղին հայ ժողովրդի համար երկաթե շղթա ու մահվան ևս մի ճանապարհ դարձավ:

---

\* Միայն Ռուսաստանը գորակոչել էր շուրջ 15 միլիոն մարդ (տողատակերի բոլոր ծանոթագրություններն իմն են – Ա. Ա.):

\*\* Նպատակ կար քրդերին ևս թուրքացնելու, բայց, քանի որ նրանք զինված էին, առայժմ նրանց օգտագործում էին իրենց շահերի համար:

\*\*\* Գերմանիայի և Հունգարիայի միացյալ թագավոր Ջիզսմունդի ձեռնարկած խաչակրաց արշավանքը XIV դարում օսմանցիների դեմ պարտությամբ էր ավարտվել, բայց գերմանացիները երբեք չէին հրաժարվել Թուրքիան իրենց ազդեցության տակ պահելու ծրագրերից:

Եվրոպական տերությունները արևմտահայության հանդեպ իրականացվող թուրքական ոճրագործությունների նկատմամբ, Ալաջաջյանի պատկերավոր խոսքով՝ «*արձանիկների կեցվածք*» էին ընդունել, արձանիկներ, որոնցից մեկի անունը Անգլիա էր, մյուսինը՝ Ֆրանսիա: Ինչպես գրում է վեպի հեղինակը. «... *ձայն չլսող, բան չտեսնող, չգզացող, չմտածող անշարժ արձանիկներ*»<sup>1</sup>: Այդ արձանիկներից մեկի մասին Ալաջաջյանը կգրի նաև, թե տեսնես աշխարհում կա՞ մի ժողովուրդ, որ սիրի անգլիացիներին:

Հայկական ջարդերի այդ մշտական «*հանդիսատես-դիտորդները*» երբեմն էլ «*միջամտել*» են, բայց միջամտել են ջարդերից հետո՝ միշտ հյուսելով խարդավանքների նորանոր հանգույցներ: Չէ՞ որ մեծ տերությունները միշտ էլ գոհում են իրենց սիրողներին՝ իրենց չսիրողներին սիրաշահելու համար: Այդպես էր, որ այդ տերությունները թուրքերին երբեք չլքեցին, ավելին, ամեն ինչով ուժեղացրին նրանց: Այդպես էր, որ Անգլիան Դարդանելում կռվում էր՝ ոչ թե այն գրավելու, այլ ռուսներին Բոսֆորը գրավելու հնարավորությունից զրկելու համար: Իսկ Ֆրանսիան գրավված Կիլիկիան հետո պիտի Թուրքիային նվիրեր: Ռուսաստանը ևս շահագրգռված չէր հայկական բարենորոգումներով, քանի որ կվերանային այն պատրվակները, որոնցով նա ուզում էր իրականացնել դեռևս Պետրոս Մեծից սկսած իր մեծապետական ծրագրերը՝ բյուզանդական երբեմնի մայրաքաղաքի՝ Կոստանդնուպոլսի\* գրավումը:

Նույնանման նվաճողական ծրագրեր ունեին ոչ միայն Ռուսաստանի դաշնակիցներ Անգլիան ու Ֆրանսիան, որոնք ոչ մի կերպ չէին հանդուրժելու Ռուսաստանի մուտքը Միջերկրականի ջրեր, հունական Արշիպելագի կղզիներ ու Դարդանելի նեղուց, այլև կայզերական Գերմանիայի գլխավորությամբ գործող ավստրո-հունգարական ուժերը, որոնց սատարում էր նաև Իտալիան: Անհոգ լուրջություն էր պահպանում նաև Հռոմի պապը: Հաշվարկը պարզ էր. կաթոլիկ Ավստրիան նրա համար շատ ավելի մեծ նշանակություն ուներ, քան հայկական բարենորոգումների հարցը: Եվ այս ամենը խիստ ձեռնառու էր իր «*չեզոքությամբ*» միշտ նենգ Թուրքիային:

Հաշտ չէին ու միմյանցից հողային պահանջներ ունեին Ռումինիան, Սերբիան, Հունաստանը, Բուլղարիան, Չեռնոգորիան: Կային նաև Պաղեստին պետության ստեղծման հարցը, Լիբանանի ու Ալբանիայի պահանջները, Եգիպտոսի ու Եմենի անկախության խնդիրները: Այս հարաբերություններում գաղտնի ու բացահայտ կնքվում էին պայմանագրեր, թեև բոլորն էլ գիտեին, որ ոչ մի համաձայնագիր խաղաղություն չի բերելու, ավելին, ոչնչացնում է նախորդ կնքվածները և նախապատրաստում հաջորդ պատերազմը: Ռազմական վերոհիշյալ միությունները, պետություններն ու իշխա-

<sup>1</sup> **Ալաջաջյան Մու.**, Չսպիացած վերք, հ. II, գիրք 4-րդ, Երևան, 2019, էջ 588:

\* Ռազմական քարտեզներում այն նշվում էր Ցարգրադ անվամբ:

նությունները\* դավում էին միմյանց և դավաճանում: Ավելի քան վատթարագույն իրադրություն էր Թուրքիայում: 1908 թ. իշխանության գլուխ անցած երիտթուրքերի կառավարությունն իր երկու՝ Իթիլաֆական ու Իթթիհադական թներով, որոնց միջև հակասությունը հասնում էր ընդհուպ սպանությունների, և որոնց, ինչպես գրում է Ալաջաջյանն իր վեպում, *հայրություն* էին անում «*բոլոր եվրոպական տերությունները*», սանձագերծել էր բալկանյան պատերազմը, որի արդյունքում 1912 թ. և 1913 թ.\*\* Թուրքիան պարտություն կրեց, և այդ երկրներից՝ Սերբիայից, Բուլղարիայից, Մակեդոնիայից Թուրքիա ներգաղթած մուսուլմանական զանգվածները (մուհաջիրները) իրենց վրեժը սկսեցին լուծել տեղի քրիստոնյա բնակիչներից: Նրանց հրահրում էին իշխանությունները՝ դրանում տեսնելով իրենց մշակած ծրագրերի իրականացման միջոցներից ևս մեկը: Ալաջաջյանը գրում է, որ արյունաբերու այդ զանգվածների գործողությունների մեղավորները նաև մեծ տերություններն էին, քանի որ նրանք չէին կարող չկռահել, որ Բալկաններից քշվածները վրեժի իրենց ծարավը պետք է հագեցնեին թուրքաբնակ քրիստոնյաների արյունով:

Բեռլինի վեհաժողովից հետո (1878 թ.), երբ ստորագրվեց 61-րդ հոդվածը, ըստ որի՝ բարենորոգումներ պետք է կատարվեին հայոց կյանքում, սուլթանն էլ ավելի սաստկացրեց հալածանքները. հայ եկեղեցական սահմանադրության արգելում, ազգային ժողովի նիստերի արտոնագրկում, հայկական դպրոցներից *հայ ժողովրդի պատմության ուսուցման վերացում*, «Հայաստան» բառի օգտագործման արգելք թերթերում, գրքերում, բեմերում:

Բալկանյան պատերազմի ընթացքում բարենորոգումների հարցը նոր զարգացումներ ստացավ: 1914 թ. փետրվարի 8-ին ստորագրվեց, այսպես ասած՝ «Բարենորոգումների օրենքը», ըստ որի՝ նաև վերահսկիչ-կառավարիչներ պիտի գային Եվրոպայից: Հոլանդացի Վեսթենեկն ու նորվեգացի Հոֆը պետք է տասը տարով դառնային հայաբնակ գավառների կառավարիչներ: Առաջինը՝ Տրապիզոնի, Սեբաստիայի և Էրզրումի, երկրորդը՝ Վանի, Բաղեշի, Խարբերդի և Տիգրանակերտի: Ի հակակշիռ այդ ամենի՝ թուրքական դաժանությունները ծավալվեցին «*բարենորոգման*» ենթակա հենց այդ շրջաններում: Դրա դրսևորումներից մեկն էլ եղավ նույն ժամանակամիջոցում գաղտնի կնքված գերմանա-թուրքական համաձայնագիրը, ըստ որի՝

---

\* Անտանտի բլոկի մեջ մտնող Ռուսաստանի կառավարության ղեկավարը՝ վարչապետը, ազգությամբ գերմանացի էր, Նիկոլայ II-ի կինը ևս գերմանական ծագում ուներ, ցարական պալատում կային և այլ բարձրաստիճան գերմանացիներ, իսկ Ռուսաստանում ապրում էին շուրջ 2.5 միլիոն գերմանացիներ, և սա այն դեպքում, երբ ռազմաճակատների առաջին գծում իրար էին խոշտանգում ռուս և գերմանացի զինվորները:

\*\* 1913 թ. հունվարին տեղի ունեցած ներկուսակցական «*հեղափոխության*» հետևանքով իշխանության ղեկն իթիլաֆականներից (համաձայնականներ) անցավ իթթիհադականներին (միութենականներ), որոնք շատ ավելի հայատյաց էին:



Անատոլիայի հայերը պետք է Միջագետքի անապատները արքայազնները: Ստորագրված «*բարենորոգումների*» դրույթներից և ոչ մեկում չկար «*հայ*» բառը: Այնտեղ նշվում էր «*թուրք*» և «*քրիստոնյա*» բնակիչներ: Արևելյան Անատոլիայում, հայերից բացի, քրիստոնյա այլ ժողովուրդներ չկային: Մինչդեռ, մի կողմից գրվում էր ազգությունը, մյուս կողմից՝ կրոնը: Այլ խոսքով, թուրքերը չէին ընդունում, որ գոյություն ունի հայ ազգ: Նրանք հայերին պարզապես անվանում էին «*մեր հողում բնակվող քրիստոնյա բնակիչներ*»: Թուրքիան, բարենորոգումների նկատմամբ արտաքուստ դրսևորելով համակերպություն, իրականում հզոր դիմադրություն էր ցուցաբերում բոլոր երեք մեծ տերությունների դեմ, քանի որ այդ երեքի միջև առկա էին մեծ հակասություններ: Եվ հենց այդ հակասություններն օգտագործելով՝ Թուրքիան որոշ զիջումներ էր կատարում Անգլիային ու Ֆրանսիային՝ դրանով, ոչ միայն նրանց միջոցները ծառայեցնելով իր տնտեսության շահերին, այլև սիրաշահելով, նրանց հեռու էր պահում հայկական հարցերից:

Թուրքիան արդեն պատմական փորձ էր ձեռք բերել, թե ինչպես կարելի է խաբել մեծ տերություններին, ինչպես և «*բավարարել*» փոքր ժողովուրդների արդարացի պահանջները: Թուրքական բռնակալության դեմ դեռևս 1875-1876 թթ. ըմբոստացած սերբերի և բուլղարների նկատմամբ կիրառված ջարդերի պատճառով Անգլիան, Ռուսաստանը և Ավստրիան Աբդուլ Համիդից պահանջել էին իրենց երաշխավորությամբ բարենորոգումներ կատարել, և սուլթանը, դիմելով խորամանկության, հայտարարեց միապետության ավարտ ու սահմանադրական իշխանության հաստատում: Բոլորը գոհ մնացին:

1864-1868 թթ. Թուրքիայում կայացած վարչական բաժանումներից մեկը անվանվում էր «Էրմենիստան վիլայեթ», որն ընդգրկում էր Արևմտյան Հայաստանի որոշ տարածքը միայն: Բաժանումն այնպես էր արված, որ հայերը մեծամասնություն չկազմեն և միացվեն այլ վիլայեթների՝ Քրդստանի և այլոց: 1878 թ. և 1880 թ. նոր բաժանումներ կատարվեցին նույն նպատակով, իսկ 1886 թ. Արևմտյան Հայաստանը բաժանվեց վեց վիլայեթների (նահանգների)՝ Էրզրումի, Խարբերդի, Վանի, Բիթլիսի, Սեբաստիայի, Տրապիզոնի:

Թուրքալեզու ժողովուրդների միասնական պետություն ստեղծելու նվաճողական ծրագրի ճանապարհին հայերին բարենորոգումներ տալը կնշանակեր նրանց նախապատրաստել ինքնուրույնության: Այդ իսկ պատճառով թուրքերը տարբեր կեղծիքների ու օրինազանցությունների էին դիմում՝ հայ ժողովրդի քանակը քիչ ցույց տալու համար: Պետական տուրքեր չվճարածներին, զինվորական ծառայության չգրանցվածներին, պետական անձնագիր և կայուն բնակավայր չունեցողներին, հայ բողոքականներին ու կաթոլիկներին, երկրից ժամանակավորապես դուրս գտնվողներին, բանտերում հայտնվածներին և այլնայլ զանազան շերտերի նրանք չէին ընդգրկում հայերի թվաքանակի մեջ:

Ալաջաջանն իրավացիորեն նշում է, որ, ելնելով աշխարհում ընթացող

դեպքերի տրամաբանական ընթացքից, մեծ տերությունների գիշատիչ քաղաքականությունը չէր կարող չհանգեցնել նոր պատերազմի: Եվ Թուրքիան, որ անպայմանորեն ներգրավվելու էր այդ պատերազմի մեջ, որևէ բարենորոգում չէր կատարի և որևէ եվրոպացի կառավարչի չէր հանդուրժի: Արևմտյան Հայաստանի ստեղծումը եվրոպական հսկողության տակ ոչ մի կերպ ցանկալի չէր նաև Ռուսաստանին, քանի որ այն կովկասահայ ուժերին պիտի մղեր արևմտահայերի հետ միացման և Ռուսաստանից անկախացման: Ռուսաստանի հովանավորությամբ Արևմտյան Հայաստանի անկախացումն էլ անհանդուրժելի էր եվրոպական տերությունների համար, քանի որ դա նշանակում էր Ռուսաստանի մուտք թուրքական տարածքներ: Եվ եթե սրան էլ ավելացնենք, որ ինքը՝ Թուրքիան, ոչ մի կերպ չէր հանդուրժի նման միավորի ստեղծումը, որը գայթակղիչ կլիներ թուրքաբնակ այլ ժողովուրդների համար, ապա պարզ է, թե ինչ վախճան կարող էր ունենալ որևէ բարենորոգում:

Սկսված Առաջին համաշխարհային պատերազմը վերջ դրեց չսկսված բարենորոգումներին: Եվ պատահական չէ, որ հավատքով ու ազգայնապետ մոլեռանդ հարյուրավոր թուրք պաշտոնյաներ, խավարամիտ մոլլաներ և ուլեմաներ նշանակվեցին հայկական շրջանների կառավարիչներ: Ձինապարտ, թե զինագերծ, փրկագին վճարած, թե արտոնագիր ունեցած 20-ից մինչև 45 տարեկան բոլոր հայ տղամարդկանց\* բանակ գորակոչեցին՝ մի կողմից թուլացնելով բնակավայրերի պաշտպանունակությունը, մյուս կողմից՝ ֆրանսիական և անգլիական ճակատները հեռու լինելու պատրվակով՝ նրանց մղելով հենց ռուսների դեմ կռվելու: Չորակոչը անգիջում էր մանավանդ հայ ուսուցիչների, մտավորականների, թերթերի աշխատակիցների, կրոնավորների, իրավաբանների նկատմամբ: Հայաբնակ գավառներ ուղարկվեցին ոստիկանական լրացուցիչ ուժեր, որոնք լուրջ ոստիկաններ չէին, այլ ոստիկան-զինվորներ, որ հավաքագրվել էին բալկանյան պատերազմում պարտություն կրած թուրք զինվորներից, ովքեր վրեժ պիտի լուծեին քրիստոնյա բնակիչներից իրենց պարտության համար: Ըստ կանխագծված ծրագրերի՝ այս ամենին հաջորդելու էր տեղահանությունը: Բայց, քանի որ տեղափոխումները կապված էին ծախսերի հետ, թուրքերը շատ հաճախ բնակիչներին չէին հեռացնում իրենց բնակավայրերից և հաշվեհարդարը տեսնում էին հենց տեղերում:

Թուրքերը միայն մարդկանց չէ, որ արտաքսում էին: Նրանք թալանում էին տները, ունեցվածքը, ջնջում տապանագրերը, վերացնում հայերեն արձանագրությունները եկեղեցիների պատերից, քանդում դպրոցները, ավերում սրբատեղերը: Այս ամենն է, որ, ինչպես վեպում բնութագրում է Չավեն պատրիարքը, ամբողջ Թուրքիան դարձել էր «*ակեղթամա*» (եբրայերեն՝ արյան լիճ), Հայաստանը վերածել մահաստանի՝ ամայացնելով բարեբեր

---

\* Թուրքական բանակ են գորակոչվել շուրջ 300 000 հայեր:

հովիտները, այրելով փարթամ անտառները:

Թուրանական անձիր կայսրության հասնելու մարմաջով բռնված՝ թուրքերն իրենց ճանապարհին քանդում ու ավերում էին ամեն բան, ինչը որ խոչընդոտ էր նպատակին հասնելու համար: Եվ այն, ինչ չէին անում կանոնավոր զորքերի թնդանոթներն ու հրացանները, լրման էին հասցնում թուրք, ավշար, չերքեզ, քուրդ, լեզգի, ալբան, մեդրեք, դրուզ, մելեն, բեշեն, քիլդան, օրջա և այլ մանր ու մեծ ցեղախմբերը և խառնախմբերը, որոնք, իրենց ձեռքն առած կացինը, բահն ու բրիչը, ոչնչացնում էին հայոց բնակավայրերի հետքերն ու այնտեղ բնակվող մարդկանց ստեղծած տները և այգիները:

Ծրագրի իրականացման համար գործում էր միայն մեկ օրենք. ամեն ինչի օրենքը ուժն է, և ուժը օրենքից էլ վեր է, ու դա հանգեցնում էր նրան, որ սպանությամբ նվաճելը և սպանությամբ այրելը հավատքի արժեք էին դարձել:

Մարդատյաց այդ կարգախոսն իրականացնելու համար ամեն ինչ պատրաստ էր՝ զենք, մոլեռանդ ու թալանչի ամբոխ, արյունարբու ոստիկանություն, կրոնական ատելություն: Իշխանությունների հաշվարկը հստակ էր. երբ չեն լինի հայեր, չի լինի «*հայկական հարց*»: Չէ՞ որ մեռածները չեն խոսում: Եվ հայասպանությունը դարձավ ուխտ առ Մուհամմեդը, որն արտահայտվեց այն համոզման մեջ, որ անհավատների արյունը արժեք չունի, որ հայ սպանելը դրախտ գնալու ուղիղ ճանապարհն է, որ հայը հողի վրա չպիտի ապրի, նրա տեղը հողի տակ է:

Վեպում Ալաջաջանը ցույց է տալիս, որ երիտթուրքերի պարագլուխներն առաջին իսկ օրերից էին ուրացել ազատության, հավասարության ու եղբայրության այն կարգախոսները, որոնցով եկել էին իշխանության: 1908 թ. հռչակած սահմանադրությունը թղթի մի կտոր էր, որի նպատակներից մեկը տեղական կազմակերպություններին ու հակաթուրք ուժերին իրենց թաքստոցներից դուրս բերելն էր՝ նրանց հետ հաշվեհարդար տեսնելու համար: Այդպես եղավ և 1913 թ., երբ կառավարությունը Պուլսի, Իզմիրի, Մալաթիայի, Էրզրումի, Մեքաստիայի, Խարբերդի և հայաբնակ այլ քաղաքների հայերից պահանջեց գրավոր ներկայացնել հայոց գրերի գյուտի և տպագրության տարեդարձներին նվիրված տոնակատարությունների\* կազմակերպիչների ու մասնակիցների անվանացուցակները: Ցուցակներ, որոնցով և առաջնորդվեց թուրք ոստիկանությունը 1915 թ. ապրիլյան իր ձերբակալություններում՝ հաստատելով նաև այն իրողությունը, որ արվեստի ու մշակույթի այդ ցուցադրությունը իրենց կողմից երբեք չի կարող ներվել\*\*:

Ալաջաջանը վեպում գրում է, որ մինչ Առաջին համաշխարհայինի նախաշեմին, արևմտահայությունը զբաղված էր իր ազգային տոնախմբություն-

---

\* Տոնակատարությունները անցկացվեցին նաև գերմաներեն, անգլերեն, ֆրանսերեն, հունարեն:

\*\* Պատրիարքարանում գրանցված այլ ցուցակների հիման վրա Մտամբուլից արտաքսվեցին կամ ձերբակալվեցին նաև հայ պանդուխտները:

ներով, դաշտագնացությամբ ու մատադօրհնություններով, տպագրում էր իր ազնվական գրողների՝ Վահան Թեքեյանի «Հրաշալի հարություն», Տիգրան Չոլոկյուրյանի «Վանքը», Հակոբ Սիրունու «Դեպի տաճարն հրաշքին» և այլ գրքեր, Կովկասից եկած հայ դերասանների ուժերով Կ. Պոլսում Լևոն Շանթի «Հին աստվածների» բեմադրությունը դիտելով, «Պրտի շանի» թատրոնում Կոմիտաս վարդապետի դեկավարած «Հայ գուսան» երկսեռ երգչախմբի համերգները լսելով, որն ունկնդրի հոգում «... մերթ ալիքի ծփանք է տեսլավորում, մերթ՝ հովի ծիծաղը եթերում, մերթ՝ զեփյուռի շոյանքով անցումը ծաղիկների վրայով, մերթ՝ կտրիճների նժույզների հեքը, որ, սուրալով Սիփանա սարն ի վեր, միանում են իրար...»<sup>1</sup>, այդ նույն ժամանակ թուրքերը գորակոչ էին հայտարարում, կնքում թուրք-գերմանական դաշնագիր, տարագրման ծրագրեր մշակում, բանտերից ազատում հանցագործներին՝ նրանց հանձնարարելով սպանել հայերին՝ հայ ծնված լինելու միակ մեղադրանքով:

... Եվ սերբերը «ճիշտ» ժամանակին Մարաեղում սպանեցին ավստրիական գահաժառանգ Ֆրանց Ֆերդինանտին... ու չէր կարող չսկսվել 1914 թ. արյունոտ օգոստոսը, որ պիտի երկարաձգվեր մինչև 1918 թ.՝ իր մեջ առնելով միլիոնավոր մարդկանց մահեր:

Աշխարհն այրվելու էր ամբողջ չորս տարի: Թուրքիան, իհարկե, պաշտոնապես հաղորդեց, որ ինքը մնալու է չեզոք, բայց հենց նույն օրը հայտարարեց ընդհանուր զորահավաք, որը շատ շուտով պիտի դառնար զորակոչ, և թուրքական մամուլի օրգանները պիտի տպեին. «Իսլամնե՛ր, ի զեն»: Ուրեմն, պատերազմ: Պատերազմ հայրենիքի ու կրոնի\* թշնամիների դեմ, որը նշանակում էր պատերազմ բոլորի դեմ, ովքեր իրենց կրոնակիցները չէին:

Բայց հավատքի պատերազմը՝ Ջիհադը (կրոնական սուրբ պատերազմ), քրիստոնյա ռուսների՝, ֆրանսիացիների՝, անգլիացիների՝, իսկ գուցե իրենց դաշնակից Գերմանիայի՝ դեմ էր հայտարարվում: Իհարկե՝ ո՛չ: Իհարկե, այն ուղղված էր Թուրքիայի ներսում ապրող քրիստոնյաների դեմ: Ինչպես գրում է Ալաջաջյանը, այդ աշխարհը սևանում էր, և այն վեր պահող արևն անգամ ճաքճքում: Քաղաքական այդ փլուզումը պատկերավոր ուժեղ փոխաբերությամբ է արտահայտում Ալաջաջյանը. «Մի եզերքով սևանում էր, ամպոտվում, հանգում, ինչպես մոխրացող կրակը: Նրա կլոր կազմվածքի կեսն արդեն գունազրկվեց, ստացավ Արմաշի հողերի գույնը, և այդ գույնը տարածվեց: Արևը դարձավ մահիկ»<sup>2</sup>:

Ըստ էության, թուրքական իշխանությունները սուլթանական Թուրքիայի նույն հին դիմակն էին կրում. տարբերությունն այն էր, որ քրիստոնյա բալկանյան երկրներից 1912-1913 թթ. կրած պարտությունը շատ ավելի կրոնա-

<sup>1</sup> Ալաջաջյան Մտ., Չսպիացած վերք, հ. II, գիրք 2-րդ, Երևան, 2019, էջ 186-187:

\* Պատերազմող տասնյակ երկրների մեջ Թուրքիան միակն էր, որ կրոնի պատերազմ էր հռչակել:

<sup>2</sup> Ալաջաջյան Մտ., Չսպիացած վերք, հ. II, գիրք 2-րդ, էջ 264:

մոլ, ազգայնամուլ ու վրեժխնդիր էր դարձրել նրանց:

Գրողը նկատել է տալիս, որ Թուրքիան միշտ նույն Թուրքիան է, և անկախ այն բանից, թե ով կլինի իշխանության ղեկի մոտ, այդ երկրի պահվածքը նույնն է մնալու, որը վեպում արտահայտվում է նաև երկրի վարչապետ Շևքեթ փաշայի խոսքերով. «Մեջքիդ գորք ու դրամ ունենաս, սեփական քաղաքականություն վարես: Ուրիշ պետություններից պարտքով քաղաքականություն չմուրաս, ոչ էլ՝ փոխառություն»<sup>1</sup>:

Տարբեր, բոլորովին տարբեր բաղձանք ու երազանք ունի հայ պատասխանատու այրը, որը վեպում արտահայտվում է Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանի մտորումներով. «Մի պատառ հող ունենաս, որ քոնը լինի, մեջքին լեռ ու բլուր ունենա: Ներքնում ձոր լինի, միջով գետակ անցնի: Իջնես ձորը, ջուր բերես դույլով, կժով, ջրես հողը՝ ակոս առ ակոս, միայն թե մի պատառ սեփական հող ունենաս»<sup>2</sup>:

Այստեղ չէ՞ հայ ազգի թերությունը, և այստեղ չէ՞ հայ ժողովրդի ուժը:

1915 թ. ապրիլյան եղեռնի նախօրեին թուրքական թերթերը նպատակադիր գրում էին ռուսական զորքերի կատարած «հնադարյան վայրագությունները» մասին, ռուսներին մեղադրում մուսուլման խաղաղ բնակչության նկատմամբ կիրառած հնարավոր «*ռճիրներ*» համար, Ռուսաստանը բռնապետություն համարում, որն իբր ուզում էր իրենց բռնի կերպով **քարենորոգումներ** պարտադրել: Եվ որ այդ ամենին միշտ էլ մասնակից են եղել հայերը:

Ալաջաջյանն իր վեպում օգտագործում է նաև հարուստ վավերագրական փաստաթղթեր: Անդրադառնանք դրանցից միայն մեկին\*:

Խոսքը վերաբերում է թուրքական իշխանությունների կողմից հայերին իրենց բնակավայրերից տեղահանելու 1915 թ. մայիսի 20-ին ընդունված «Ժամանակավոր օրենքին», որտեղ հանձնարարվում էր զորաբանակին և զորաբաժիններին «*զինված ուժերով*» պատիժներ կիրառել և «*արմատապես ոչնչացնել*» կառավարության հրամաններին ու «*միջոցառումներին*» ընդդիմացողներին: Չմանրամասնելով այս օրենքի մի շարք կողմեր՝ նշենք միայն մի քանի կետեր: Օրենքի կիրառումը հանձնարարված էր ոչ թե իշխանության ցածր օղակներին, այլ ռազմական ուժերին, և այն էլ՝ զենքի կիրառմամբ: Թուրք իշխանությունները պատերազմի հենց սկզբից զինաթափել էին հայերին, զինել թուրքերին, քրդերին ու մուսուլման տասնյակ այլ ցեղերի, բարձրացվել էին հարկերը, տարվել էին անասունները, փակվել էին թերթերը: 1914 թ. (հոկտեմբերի 13) հայտարարվել էր ջիհադ\*, բոլոր թուրքերին դարձնելով միջահիդդեն (կրոնական մարտիկ): Մոլեռանդ այդ ամբոխին խոս-

<sup>1</sup> Ալաջաջյան Մու., Չսպիացած վերք, հ. I, գիրք 2-րդ, Երևան, 2019, էջ 221:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 220:

\* Այդ փաստաթղթի մանրամասների վերաբերյալ հեղինակը 1990 թ. գրել է իր առանձին հոդվածում (տպագրվել է «Խորհրդային Հայաստան» թերթի 1990 թ. ապրիլի 22-ի համարում):

\* Թուրքիան վերջին անգամ ջիհադ էր հայտարարել 300 տարի առաջ՝ XVII դարում:

տացվել էր դրախտ՝ եթե շատ քրիստոնյա սպանի, սկսել էին անվանափոխել հայկական բնակավայրերը, օրենքի ընդունումից առաջ՝ դեռևս ապրիլին, արդեն աքսորվել էին հայ մտավորականները, տեղահանվել\*\* էին գավառաբնակ հայերը, որոնք զանգվածաբար քշվում էին «*օրենքում*» ասված «*այլուր*», ասել է՝ Միջագետքի անապատները, որի վերաբերյալ ընդունված որոշման մեջ գրված էր «*փոխադրել*» ոչ թե առանձին անհատների կամ խմբերի, այլ «*գյուղերի և քաղաքների բնակչությանը*» և այն էլ՝ այդ ամբողջ բնակչությանը մեղադրելով «*լրտեսական գործունեության կամ դավաճանության*» մեջ: Եվ, ուրեմն, ո՞վ պիտի դիմադրեր այդ ամենին, եթե ոչ հենց այդ աքսորվող ու թալանվող հայը: Ուրիշ ո՞ւմ դեմ էր հայտարարված ջիհադ, եթե թուրքական մամուլը անթաքույց գրում էր, որ այն օտար պետությունների դեմ չի հայտարարվում՝ ո՞չ քրիստոնյա Անգլիայի, Ֆրանսիայի ու Ռուսաստանի և ո՞չ էլ իրենց դաշնակից Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի: «*Օրենքը*» ընդունված էր «*ժամանակավոր*», բայց Թուրքիայի համար ժամանակավոր ոչինչ չկա, ինչպես որ չկա ոչ մի սրբություն, երբ հարցն իրենց է վերաբերում: Այդ օրենքը գործում է նաև մինչև այսօր ու կասեցված չէ ոչ մի հրամանով:

Թեև ջիհադի մասին բացահայտ աղաղակում էին իթթիհադի ղեկավարները, թերթերը, մզկիթների աշտարակներից՝ մոլլաները, բարձրաձայն խոսում էին հրապարակներում, բեմերում, հավաքույթներում, աղոթավայրերում, սակայն Թուրքիան ձեռնարկել էր նաև ամեն ինչ՝ քողարկելու համար այդ ամենը. արգելված էր օտարերկրացիների ճամփորդությունը երկրի ներսում, մամուլում չէին տպագրվում վիլայեթներում կատարվող իրադարձությունների վերաբերյալ նյութեր, սպրդած առանձին հաղորդագրություններն իսկույն հերքվում էին, արգելքի տակ էին առնված հեռահաղորդագրություններն ու նամակները:

Ուշագրավ է, որ 1915 թ. ապրիլի 24-ին հաջորդած երրորդ օրը՝ 27-ին, սուլթան Մեհմեդ Ռեշադն իր ծննդյան տարեդարձի առթիվ ներում շնորհեց բանտերում գտնվող հազարավոր գողերի ու ոճրագործների, որոնցից ռազմական ավազակային խմբեր կազմվեցին:

Իր վեպի շատ էջերում Ալաջաջյանը ամենայն մանրամասնությամբ է ներկայացնում հայ Գողգոթան: Նորից ու նորից հաստատում, որ հայերի տեղահանությունը շարունակվեց պատերազմի ամբողջ ընթացքում, մատնանշում, որ այն սպանդի ձևերից մեկն էր՝ քաղաքականապես ավելի քողարկված: Դատարկված բնակավայրերում հայերի տները գրավվում էին մուսուլման վաչկատունների կողմից, իսկ ունեցվածքի այն մասը, որ չէր թալանվում, գրանցվում էր որպես պետության սեփականություն: Ամիսներ տևող ճամփորդությունից, քաղցից ու ջրի պակասից, համաճարակներից, «*անհայտ*» չա-

---

\*\* Տեղահանության սկիզբը դրվել էր դեռևս գերմանա-թուրքական գաղտնի պայմանագրով՝ ԲԲԲ երկաթուղու շինարարության համար հայ բանվորական ուժը օգտագործելու նպատակով:

րագործների, մոտակա բնակավայրերից եկող մուսուլման բազմությունների հարձակումներից, ովքեր ոչ միայն ուտելիքն ու շորերն էին տանում, այլև երեխաներին՝ նրանց իսկույն ևեթ թուրքական, քրդական, արաբական անուններ տալով, մանավանդ այն երեխաներին, ովքեր ի վիճակի չէին հիշելու իրենց ծնողներին, գաղթականների շարքերը նվազում էին, սպառվում: Ոստիկանները հատկապես հանել էին տալիս գաղթականների կոշիկները, որպեսզի նրանք ի վիճակի չլինեն քայլելու և ոտքերին ստացած ծանր վերքերից շուտ մահանան: Այդ զանգվածներին դիտավորյալ տանում էին անջուր վայրերով, քայլեցնում էին այնքան, որ այլևս փախչելու ուժ չունենային, ծնողներին էին վաճառում նրանցից իսկ նախապես գողացված երեխաներին: Անապատները գնալով բաց շիրիմ էին դառնում, և այլևս ավելորդ էր դարձել այդ մարդկանց սպանելը, քանի որ նրանք առանց դրա էլ մահանում էին:

Ալաջաջյանը անդրադառնում է մանավանդ «հայտնի» չարագործների՝ Էնվերի, Թալեթի, Շյուքրիի, Հալիմի, Ջեմալի և այլոց գործունեությանը, բացահայտում նրանց մարդասպան, կրոնական ու ազգայնամուլական այն դատողությունները, որոնք նրանց բուն էությունն են հատկանշում: Այդ մարդասպանների ներկայությունը զգալի է նաև վեպում գործող ամեն մի ոստիկանի ու պաշտոնյայի մեջ:

Միամտություն է կարծել, որ եթե իթթիհադը չանցներ իշխանության գլուխ, չձագեր Առաջին համաշխարհային պատերազմը, ռուսները չհեռանային իրենց գրաված տարածքներից, անգլո-ֆրանսիական ուժերը չպարտվեին Դարդանելում, տեղահանություն ու եղեռն չէր լինելու:

Ամեն բան ծրագրված ու մանրակրկիտ մշակված էր ի սկզբանե: Չլինեին վերոհիշյալ իրողությունները, այլ առիթներ կհնարեին թուրքերն իրենց գերագույն նպատակներին հասնելու համար: Քննություն չի բռնում նաև այն տեսակետը, թե հայ ժողովուրդը ռուսասեր լինելու համար ոչնչացվեց: Մի թե Թուրքիան իր ծրագրերն իրականացնելու ճանապարհին այս անգամ պատրվակ չէր բերելու հայի ֆրանսասիրությունը կամ անգլասիրությունը:

Առաջին հայացքից կարող է թվալ, թե հեղինակը ձգձգել է պատումը, չափից ավելի ծանրացել քաղաքական, ռազմական ու ազգային խնդիրների վրա: Մակայն այդ ամենն ունի իր հիմնավորումը. սոցիալական, ազգային ու ֆիզիկական բռնությունների հենց այդ հարատև շղթան էր, որ հայ մարդուն ստիպեց թողնել իր մաճն ու վարը և ձեռքն առնել զենք՝ պաշտպանելու համար ոչ միայն իր կյանքն ու ինչքը, այլև մարդկային ու ազգային արժանապատվությունը:

Այդպիսի իրականության և նրա մեջ հայտնված հայ մարդկանց ու ժողովրդի մասին է այս վեպը, որ, առանցք ունենալով մի գերդաստանի՝ Մեռոնյանների պատմությունը, իր ամբողջության մեջ մեզ է ներկայացնում թուրքերի կողմից XX դարասկզբի առաջին տասնամյակներում հայ ժողովրդի նկատմամբ կիրառված այն սարսափելի գործողությունները, որոնք ողբերգական եղան ինչպես տարածքային ու ֆիզիկական, այնպես էլ՝ նյու-

թական ու մշակութային կորուստների իրենց անդառնալի հետևանքներով:

Խոսելով վեպի ժանրային առանձնահատկությունների մասին, պետք է ասել, որ այն Մովսես Խորենացու և V դարի մեր մյուս պատմագիրների ավանդների յուրօրինակ մի դրսևորումն է, որտեղ գեղարվեստն ու պատմությունը հանդես են գալիս միահյուսված, ոչ միայն իրար լրացնող, այլև իրար բացահայտող որակական դրսևորումներով: Այս առումով Ալաջաջյանը որքան մատուցման ձևով գեղագետ, նույնքան էլ ասելիքի բովանդակությամբ պատմաբան-վերլուծաբան է: Պատումի այդ միահյուսումն էլ պայմանավորում է վեպի ժանրային բնույթը, որ դասական է ու նոր, հնուց եկող ու նաև ժամանակակից:

Վեպի նման կառուցվածքը հեղինակին հնարավորություն է տվել ասելիքի ծիրը ընդլայնել: Ըստ էության, նա գրում է մի մեծ դժոխքի, հայկական դժոխքի մասին, պատկերում այդ գեհե՛նում հայտնված արդար ու ազնիվ մարդկանց, որ իրենց արգավանդ երկրից քշվում են մինչև Դեր-Չորի ամառայությունները: Այդ համապատկերում իմաստավորվում են հայ լեզու, մշակույթ, բարքեր, ընտանիք, ավանդույթներ արժեքները, որոնց հանրագումարը ազգային ոգի ասվածն է՝ ժողովուրդ հասկացության անփոխարինելի հատկանիշը:

Վեպում հաճախ է շեշտադրվում, որ ոչ միայն Ֆնդիճաքի անտառները, այլև ամբողջ երկիրն է երաշտի մեջ: Վեպում կա մի հատված, որտեղ պատկերվում է հայ հավատացյալների մեկնումը Ուխտասար՝ օրհնված լաթեր թաթախելու սարն ի վեր անցնող խոնավ ամպերի մեջ: Այդ լաթերը հագցնում են խաչափայտի վրա և այն կոչում «Անձրևահարս» (հիշենք, որ վեպի 3-րդ հատորը վերնագրված է «Անտառների անձրևահարսը»): Բայց այդպես էլ ո՛չ Ֆնդիճաքի և ո՛չ էլ անապատներում տոչորվող տարագիր գանգվածների վրա փրկարար անձրևի կաթիլներ չեն թափվում:

Ճիշտ է ասված, որ ապրում է այն ժողովուրդը, որն իր պատմությունից առաջ չի մահանում: Իսկ ապրելու համար, գոյատևման համար հիմքեր են անհրաժեշտ՝ պետականություն, դպրություն, մշակույթ, լեզու, հավատք ու եկեղեցի, և այդ բոլորի պահպանման համար ուժ ու զենք է պետք:

Միջազգային արդարության սկզբունքն ուժի իրավունքն է: «*Ե՞րբ են այս ճշմարտությունը հասկանալու հայերը*», – ասում է վեպի գերմանացի հերոսներից մեկը՝ Ֆայնբերգը: Ըստ նրա՝ հայերը ո՛չ իրենց և ո՛չ էլ ուրիշների պատմությունից դասեր չեն քաղում, չեն զինվում ու չեն սիրում զենքը, սիրում են խաչը և իրենց ազատությունը սպասում են ուրիշներից:

Ալաջաջյանն անդրադառնում է նաև այն հարցին, որ քիչ չէին այն հայերը, ովքեր մտածում էին, թե զենք վերցնելը հավասարագոր է բնաջնջման, և անապատների միջով, քաղցի, համաճարակների ու թալանի ճամփով անցնելը դեռ մահ չէ:

Պարսկա-թուրքական բռնապետական 500 տարիների ընթացքում, իրոք որ, հայն այդպես էլ զինասեր չէր դարձել ու մնացել էր հողասեր: Հող, որ



հավատք էր, քաղցրություն ուներ, ապրեցնում էր նրան ու բերկրանքով լցնում հոգին, հայրենի հող, որ երգ էր նաև ու մեղեդի: Բայց հենց այդ հող հայրենին պաշտպանել հնարավոր էր միմիայն զենքի ուժով:

Թուրքիայի ստեղծած բռնությունների ու արյան ծովում կարո՞ղ էին հայերը միասնաբար դիմադրել, միասնական ճակատ ստեղծել, ընդհանուր թշնամու դեմ ամուր բռունցք կազմել: Սա մի հարց է, որ ակամայից ծագում է վեպի ընթերցման ժամանակ, մի հարց, որին դեռ այսօր էլ դժվար է միանշանակ պատասխանել: Թեև Զեյթունը, Մուսալեռը, Ամանոսը, այդ թվում և Ֆնդիճաքը, կարողացան զենք բարձրացնել, անժխտելի է այն իրողությունը, որ լեռներով ու անտառներով իրարից կտրված, մուսուլմանական բնակավայրերով բաժան-բաժան արված հայաբնակ կղզյակներն այդպիսի հնարավորություն չունեին, եթե անգամ մի կողմ դնենք այն փաստը, որ թուրքական իշխանությունները հյուսել էին կառավարական ու ոստիկանական ոստայաներ՝ որևէ շարժում կամ միացում թույլ չտալու համար:

Ալաջաջյանը թեև իրավացիորեն գրում է, որ հայոց գոյատևման մեծագույն զենքը *«այբուբենն է, որ կենաց լույս է արձակում»*, այդուհանդերձ, հեղինակային ասելիքը վեպում հանգում է նրան, որ ազգային գոյատևման համար կարևոր է նաև երկաթե զենքը, որը *«մահաբեր զնդակներ է արձակում»* թշնամու վրա:

Կովելով ապրել, ապրել՝ կռիվը շարունակելու, մահին մահով հատուցելու, մեռնելու և ոչ թե սպանվելու համար, սա հենց այն վճռականությունն ու ազատասիրությունն է, որ վեպում ժողովրդին տանում է պայքարի: Եվ պատահական չէ, որ մայր հողն ու անտառը դառնում են ֆնդիճաքցիների վերջին հանգրվանը: Այն ֆնդիճաքցիների, որ անիծում էին Աստծուն ու հենց Աստված կանչելով գոհվում: Կովողներից շատերը, այո՛, մեռնում են, բայց այնտեղ, որտեղ չկովեցին, կրկնակի՝ մահ ընդունեցին:

Լոս Անջելեսում լույս տեսած «Ստեփան Ալաջաջյան. Վաստակաւոր եւ Արգասաբեր Գրագէտը» վերնագիրն ունեցող իր գրքույկում այդ մասին իրավացիորեն գրում է նաև սփյուռքահայ մտավորական ու բարերար Օշին Քեշիշյանը՝ հերոսական այդ պայքարը բխեցնելով նախ և առաջ՝ ապրելու, արժանապատվությամբ մեռնելու, և, դրանով իսկ, գոյատևելու *«անզուսպ տենչէ մը թելադրուած»*<sup>1</sup> լինելու հանգամանքից: Մեռնելով հաղթել մահին, բայց պետք էր նաև ապրելով հաղթել մահին: Եվ ուրեմն, ով զենք էր վերցնելու, նա էր ապրելու և չէր թաղվելու քարհանքերում, չէր խեղդվելու ճահճուտներում, չէր մորթվելու ձորերում:

Ազգային գոյատևման, իրենց հող ու ջրի սիրով լցված ժողովրդի արժանապատվության փրկության համար զենք վերցրած, մշակույթ ստեղծած, ընտա-

---

<sup>1</sup> Քեշիշյան Օ., Ստ. Ալաջաջյան. Վաստակաւոր եւ արգասաբեր գրագէտը, Լոս Անջելես, 2009, էջ 18:

նիք ու ավանդույթ հարգող, բարոյական բարձր չափանիշներով օժտված և ամեն երեկո պատարագ հնչեցնող մարդկանց կյանքի պատմություն այս վեպը նաև մերժման խոսք է՝ ուղղված ամեն սպանդի ու ավերման, ջարդի և բռնության, որպեսզի «Օձապտույտ երկայնուղիներ» որպես Անակոնդա վիշապօձ չփաթաթվի հայ մարդու մարմնին, հայոց աշխարհի «Հովիտները չամայանան», հարազատ բնաշխարհի «Անտառների անձրևահարները» հարատևեն:

Հանրագումարային ձևակերպումով՝ փաստավավերագրական պատկերումների և պատմագեղարվեստական բացահայտումների համապատկերում Ստ. Ալաջայանի «Չսպիացած վերք» վեպը սերունդների խորհրդածությանն է հանձնում հայ ազգի թերության և հայ ժողովրդի ուժի՝ այսօր էլ արդիականությունը չկորցրած խնդիրը:

Հայ ժողովրդի ամբողջ պատմության ընթացքում արշավող ու տեղացի թշնամիները կարևորը համարել են հայերի ֆիզիկական ոչնչացումը, որը հանգեցնելու էր ամեն հայկականի վերացման: Մերօրյա թշնամիները (որոնք միշտ նույնն են) հակառակ ծայրից են ձգտում հասնել իրենց նպատակներին՝ ոչնչացնել լեզուն, հավատը, մշակույթը, ընտանեկան բարքերը, և հայությունը ինքնին կոչնչանա, քանի որ կվերանա ոգին, որ ազգի ամեն ինչն է՝ երեկը, այսօրը, վաղը:

**Артсrun Аvаgяn – Роман Степана Аладжаджяна «Незажившая рана» как историко-художественный документ**

В статье обстоятельно рассматриваются события национально-общественной жизни начала XX века, политические и геополитические сдвиги, отраженные в трилогии Степана Аладжаджяна «Незажившая рана», состоящей из более чем 1500 страниц. Сюжет романа разворачивается на строительстве железной дороги Берлин-Босфор-Багдад, на оборонительном сражении в одном из Киликийских поселений – Фндичаке. Посредством аналитических обобщений затрагиваются военный, политический, национальный и различные человеческие аспекты, которые до сих пор остаются актуальными и дают повод для размышлений.

**Artsrun Avagyan – Stepan Alajajyan’s Novel “Unhealed Wound” as a Document of Historical and Artistic Value**

The article presents a comprehensive analysis of the national and social events, political and geopolitical movements of the beginning of the XX century based on Stepan Alajajyan’s three-volume novel “Unhealed Wound” which is more than 1,500 pages long. Depicting the construction of the Berlin-Bosporus-Baghdad railway along with the heroic self-defense battle fought by Fnditchak, one of the settlements of Cilicia, the novel touches upon various military, political, national and human realities through artistic and analytical generalizations, which are still very actual today and give food for thought.

Ներկայացվել է 08.08.2020

Գրախոսվել է 15.08.2020

Ընդունվել է տպագրության 12.11.2020